

Այծարտօճ

Ծորածոյ մեղու լըցցի բերան քո լի, ո՛վ թիրսէ,
Ծայր 'ի ծայր բըջիջը գեղցին. և յեղիւնայ քաղցրենի
Կերիցես թուզ. քան զճրպիւն գեղղեղեսցես յոյժ չընհալ.
Ահա քեզ և դաշխուրան, տես զի քանի անոյշ բոյր,
Գողջիւր, յաղբերակունս ջընջեալ սրբեալ դարնայնոյ.
Եկի աստ Կիսսեթա. կըթեա գու օն. և դուք քօջք
Մի յառնէք յօտն 'ի կոյսուեւ, զի մի նոխաղն որսասցի:

Թարգմ. Հ. Ա. ՍՈՒՔԵՆՆՈՍ

ԻՒՎԱՆ ԹՈՒՐԿԵՆՆԻՎ

Ռուսիոյ մատենագրութիւնը գեռ ևս
մանուկ է հասակաւ. այս դարուս հետ
առաւ փայլելու, և 'ի սկզբան բոլորո-
վին պայրընական էր. վասն զի այն
ժամանակները լորտ Պայրընի ոգին կը
ճառագայթէր Եւրոպայի վրայ: Դառն
ճաշակ մը կենաց, ամբարիշտ և մեծա-
խորհուրդ յանդգնութիւն, սոյնագ և
անարգիչ ոգիք, մեծամեծ ակընկալու-
թիւնք, ամենամեծ յուսահատութիւն.
այսպիսի էին ռուս բանաստեղծութեան
կնիքն 'ի լէրմոնտով և 'ի Բուլչիւն:
Այս մեծամիտ մարդկանց ցեղը չու-
տով անցաւ և եղբրական հարուածք
առին տարին զանոնք: Կրիթայնտով,
այս բանաստեղծից անդրանիկը, Պարս-
կաստան վճարեցաւ կոտորածի մը մէջ:
Բուլչիւն նախանձեցաւ այս գեղեցիկ և
եղազ մահուան վրայ, և ինչն ալ գըն-
տակէ մը հարուածեցաւ մենամարտու-
թեան մէջ, և մեռաւ երեսուն տարե-
կան հասակին. լէրմոնտով անկէ քանի
մը տարի վերջը Կովկաս սպաննուեցաւ
քսան և վեց տարեկան հասակին. ու
բուն համար կ'ըսէ ազգակից քննա-
դատն Բիէլինսքի թէ իրաւակնոյթիւնն

սկսէր էր զարթնուշ աւնոր վրայ: Եւ
յիրաւի երիտասարդութիւնն երազ
մ'է. Կոկոլ միայն արթնցաւ անկէ,
ապրեցաւ և հասունացաւ: Իրմով ռուս
մատենագրութիւնն յերկիր իջաւ, հաս-
տատութիւն առաւ, մարդասօտի եւ
դաւ:

Երբ Ռուսիոյ վիպասան բանաստեղծ-
ներն, որոնք սահեցան անցան. այնպի-
սի երազութեամբ զոր կիրք կը տպա-
ւորեն մարդկեղէն կենաց վրայ, և տը-
խուր ու բարձր յիշատակ մը թողու-
ցին, անդին նոր ցեղ մը թէ և վառ-
վռուն, սակայն մտաղիր և անդրադար-
ձող, աճեցաւ և ձևացուց Կոկոլի օրի-
նակին վրայ դպրոց մը, որուն ձեկտ-
մունքը վերոյիշեալ քննադատ Բիէլսքի
այս կերպով համառօտեց. « Ռուստը
պէտք է ըլլայ հաւատարիմ բացատրու-
թիւն կենաց »: Այս նորեկներն իմաս-
տութեամբ ամենայն ինչ մարդկեղէն
հասակաւ չափեցին: Կենացմէ դուրս
բան չերևակայեցին. անոնց երևակա-
յութիւնն հանգչեցաւ ճշմարտութեան
վրայ. որով աւելի ոյժ առաւ և միան-
գամայն ոչինչ նուազ չնորհր ստացաւ:

իւ այս բնուեցաւ քնական դպրոց (école naturelle), ուր իւվան թուրկներն ի պարզեց սիրելի և չքնադադրաւ մտաւորական կարողութիւններ:

Հիմա իւվան թուրկներն ի արդի Ռուսիոյ առաջին վիպասանն է, և այն սակաւթիւ մատենագիրներէն մէկն, որ քաջ գիտեն իրենց յանկուցանել ամեն դաս ընթերցասիրաց համակրութիւնը: Իւրաքանչիւր ոք անոր վիպասանութեան և անոր առաջադեպաց մէջ կը գտնէ սիրելի դիւցազուն մը, այնպիսի բան մը որ բոլոր զանազան զգացմունք կ'ազդէ սրտին: Ազատասէր ըստած Ռուսները զինքը չառ կը յարգեն, որ առաջինն եղաւ սիրտ ընելու ներկայացնել ճշմարիտ և ճգողական գոյնելով յառաջադիմութիւն սիրողաց սակաւթիւ խմբէն քանի մը անձանց բարոյքը: Իսկ ընդհակառակն պահանջողականք կը սիրեն անոր ազնիւ և վայելքաւ գրութեան ոճը, ընտիր արուեստը և քանի մը գրուածքը, որոնց իմաստներն իրենք կ'ուզեն հակառակ մեկնել բուն մատենագիրն մտացը: Երբ իւվան ընթերցասիրաց մեծ մասն՝ փափաքանք և ախորժով կը կարդայ զթուրկներն, և կուրորէն կը թողուն իրենք գիրներ անոր բանաստեղծական հանճարոյն զառանցանքը:

Եւ ոչ միայն 'ի Ռուսիա հոչակուած է այս երևելի մատենագրին համբաւը, այլ իր գրուածքն յերոպական ղլխաւոր լեզու թարգմանուելով, Գերմանիոյ մէջ արժանի եղաւ Խանձար համարուելու, Գաղղիոյ մէջ՝ երևելի վիպաւասն, սիրելի մատենագիր: Ամբիկացիք և Անգղիացիք զինքն իրենց թէքրէյի կարգը կը դասեն. իսկ Հունգարացիք որ կ'ատեն և կ'արհամարհեն այն ամեն բան որ ռուս է, զթուրկներն ի արժանապէս կը մեծարեն. և մեր ռուսիացի ազգայինքն ալ ոչինչ նուազ քան զայլ կը յարգեն զինքը:

Տարակից չկայ թէ թուրկներն այն սակաւթիւ ռուս մատենագիրներուն կը վերաբերի, որոնց գրականական

գործունէութիւնն՝ նպաստեց Ռուսաց ազգն ալ քաղաքականացեալ մեծ ժողովուրդներէն մինն համարել տալու: Երբ կողմանէ իբրեւ արևմտականութեան ներկայացուցիչներէն մէկն 'ի գրականական մասին, մեծամեծ արդիւնաւոր ծառայութիւններ մատուց Ռուսաց ընկերութեան, մաքառելով ընդդէմ յետախաղաց յոժարութեանց և հակամիտութեանց աշխարհիւրաց, որոնք կը հակառակին նորամուտ վարդապետութեան հաստատութեան և գործադրութեան դէմ, վերագաւելով իրենց երկրին կարգաւորութիւնքն ազգային բարքը. սակայն ինքը միշտ գլխի պիտի մնայ մտաւորական զարգացման 'ի Ռուսիա, և անկողմնասէր պատմի մը յիշելով անոր բարերար ազդեցութիւնը արդի ընկերականութեան վրայ, պիտի բաղձաւորէ զինքն Եւրոպայի Գերմանիոյ (Jeune Allemagne) մատենագրաց հետ:

Այս ըսելով պէտք չէ հասկընալ թէ թուրկներն յայտնած ըլլայ քաղաքական կարծիք և հակամիտութիւններ՝ Գերմանացի Հայնէի և Կուլեքովի, (որ անկարելի էր այն տարիներու մէջ երբ սկսաւ գրել), այլ վասն զի հանգոյն այն գերմանացի եղբայրակցացը, կը կուռէր քանի մը հնացեալ նախապաշարմանց և ընկերական կենաց քանի մը անկանոն երևութից դէմ: Եթէ առաջինք կը ձկուէին գերմանական մեծ հայրենաց միութիւնը յաջողընելու, թուրկներն իր Ռուսիոյ մը Յիշատակաւ կարաւ ըստած գրուածքովն, զոր ոմանք գերազանց կը համարին քան զամեն իւր ուրիշ գրականական գործերը, յայտնեց գերեաց ազատութեան ոչինչ նուազ մեծ գաղափարը: Թուրկներն առաջադեպ և վիպասանութեանց հրատարակումն առաջին նշան մ'էր ազգին մէջ բարոյական ոխափման և վերածնութեան 'ի լաւագոյն կեանս, յետ դարական թմբակի խոր քնոյ: Ընտիր և սուր հանճարովն հետամուտ կ'ըլլայ ընկերութեան կերպարանափոխութեանը, և կը թարգմանէ զայն իւր

գրուածոց մէջ, որոնք յաւերժական աղբիւր պիտի մնան պատմընաց, որոնք մէ պիտի քաղեն այն ժամանակի պարագային ճշգրիտ նկարագրեր:

Դանիօթագոյն գրուածքն են Ռուտին, Հսկուզմն, Ազնուական բոյն, Հարք և Որդիք, և Որսորդի մը Յիշատակարանք: Ըսուեցաւ թէ Թուրկենեմ մասնաւորապէս բարոյագէտ (physiologiste) էր գրականութեան մէջ, այսինքն թէ իրական կերպարանաց նկարագրութեան վրայ միայն կը կեդրոնացունէր իր ուսումը: Մէկ խօսքով տարեգրող և լուծանակարիչ էր ընկերական երևութից: Սակայն այսպիսի կարծիք մը բուրովին ստոյգ չի համարուիր: Վասն զի թէ և իրականաց (réalistes) ըսուած գրութեան պատկանի և լուսագրէ իրական կենաց յայտնութիւնքն, 'ի վերայ այսր ամենայնի ինքը պատկերին իրեն յատուկ դրոշմ կու տայ և այնպիսի գոյներով կը գեղերեսէ, զորոնք ինքն աւելի յարմար և պատշաճ կը համարի: Այն սէրն որով Թուրկենեմ կը հաղորդէ իւր յատուկ տպաւորութիւնները, ամեն մէկ տողին մէջ յայտնի կ'երևայ, և ախորժելի կ'ընէ իւր գրուածոց ընթերցումն: Ոչ, ինքը պարզ լուսանկարիչ չէ, այլ հանճարեղ պատկերահան մ'է, որուն արուեստն՝ թէ և պակասաւոր ըլլայ ըստ քնարեգականին, սակայն ունի իր քերթողական տարրը, և իր հանճարն՝ սրտի և իմացականութեան զգացմունքը զարմանալի կերպով թարգմանելուն վրայ կը կայանայ: Իւզան Թուրկենեմ հին ազնուազարմ ընտանիքէ առաջ կու գայ, որուն ծագումը կ'ըլլէ մինչև 'ի ժամանակս տիրապետութեան Թաթարաց 'ի Ռուսիա: Հայրն հազարապետ էր Ռուսիոյ բանակին մէջ, և դարուս սկիզբները ամուսնացեր էր մեծատուն ժառանգուհւոյ մը հետ, վառվառէ լուծովինով անունով, և այս ամուսնութենէն ծնաւ Թուրկենեմ յամին 1818 հոկտեմբերի 28, Օրէլ քաղաքը: Այս Թրէլի նահանգի մէջ, որ իր գրառութեան ողորդողութեանց ապագայ աւարտեղ եղաւ, մանկութեան առաջին տարիներն անցուց Թուրկենեմ, Հօն քաղաքացաւ 1840ին հետադառնալու այն գաւառին մէջ ապրող անձանց բարքն, և զորոնք ինքը գիտցաւ մեծ ճարտարութեամբ և ճշգրիտ կերպով նկարագրել իր առասպելեալ անձինք զանազան կերպարանոք: Հօն սկսաւ նաև իր դաստիարակութիւնը: Ռուսաց ազգին մէջ 1812 տարին՝ հայրենասիրական զգացմանց՝ զեղմունք պատճառած էր, այլ սակաւատե և առանց հետեանքի մը: ամենայն ինչ շուտով իրենց առաջին վիճակը վերագարձան: Ընկերութիւնը չըմանչցաւ և կամ չըլարագեց ազգային կեանքը: Ոչ միայն երկու մայրաքաղաքաց մէջ կը տիրէին բարք և սովորոյթը օտար ազգաց, զոր քով նկարագրած է Լէոն Թուրկոյի կոմսն իւր Պատերազմ և Խաղաղութիւն ըսուած վիպասանութեան մէջ, այլ նաև հեռաւոր գաւառներու մէջ ալ, մեծատունը և ազնուականք իրենց որդիքը կը դաստիարակէին ըստ արդի եւրոպական սովորութեանց, և մասնաւորապէս ըստ Գաղղիոյ: Ապակաւեալ ալիւմնատքն դեռ ևս չէր գրտնուած, հետեալբար չէր ալ կրնար անհանգստութիւն պատճառել այն գաղղիանդներուն: Եթէ երբեմն հակառակ ձայնիւր ալ լսուէին այս նորասէրներու դատուն հակամիտութեանցը դէմ, սակայն նոյն ձայները չէին կրնար հասնիլ մինչև 'ի խորս գիւղոյն՝ յորում կը դաստիարակուէր Պարոն Յովնանիկ (Monsieur Jean) պատանին, որ օտար վարժապետաց հետ կը ջանար սովորիլ դերմաներէն և գաղղիերէն անսխալ խօսիլ և գրել: Ռուսերէն լեզուի վարժապետ մը աւելորդ զարդ մ'էր այն ժամանակները: Իւզան կրնար սովորիլ այս լեզուն պատուէրներ տալով ծառայից, և կամ զբօսնելով գեղացուց որդւոցն հետ:

Առաջինն որ յայտնեց իրեն ազգային գրականութեան մը գոյութիւնը՝ մօրը Թուրկենեմի սպասաւոր մ'եղաւ, որ պարագութեան ժամերուն մէջ քանի մը

բանաստեղծներ կարգացած էր: Թուր-
կենեմի ճարտար ձեռքով նկարագրած
է մուսայից այս անտալիս մեկնաբա-
նը, իւր վերջին վիպասանութեանց
մէկուն մէջ, որ Բսթիւն և Պապուրիւն
(Ptnim et Baburin) կը կոչուի: Ետքը
ժողովը գրին զինքը Մոսկուա գիշերօ-
թիկ գարաց մը, յամին 1830, ուր օտար
ընդունաց ուսումն կատարելագործեց:
Որով այս մատենագիրը շատ լաւ կը
խօսի և կը գրէ գաղղիերէն, գերմանե-
րէն և անգղիերէն. քանի մը վիպասա-
նութիւններ ունի գերմաներէն գրած,
քանի մը գրուածք ալ գաղղիերէն, և
շատ տարի չէ որ Լոնտոնայի Աթենէոն
(Athenæum) ըստած օրագրին մէջ իւր
գրականական քննադատութիւնները
հրատարակեց:

Եւրոպական լեզուաց կատարեալ
ժանօթութիւնը՝ շատ օգտեց իրեն ա-
րևմտական ուղեւորութեան զառնալու: Այն
ժամանակը ուստիւրէն լեզուաւ ուսում
նական գիրք մը չկար, որ կարող ըլլար
ուսումնասիրին յառաջագիմութեան
հիմնական խարիսխ ըլլալ, որով ստի-
պուած էր դիմել օտար աղբերաց, ա-
րևմտեան գրուածք: Նոյնպէս Թուր-
կենեմ ալ նոյն հարկին տակն ընկաւ.
վասն զի արևմտեան հրահանգաց ճա-
շակն առած ըլլալով, վրասնզ կար որ
օտար ժողովրդաց կենացն ու հրահան-
գացն հետևող ըլլայ, սակայն առանց
ամենին ֆրանս մը բերելու այն սիրոյն՝
զոր կը սնուցանէր հայրենեաց համար,
և այն հաւատոցն՝ որ ունէր ազգին
ստեղծիչ կարողութեանցը վրայ: Բնա-
կանապէս ինքը ցաւով սրտի պէտք էր
տեսնել, թէ ինչպէս կը կորսուէին այն
ճոխ յասկութիւններն՝ զոր բնութիւնն
շնորհք էր ուսու ժողովրդեան, և պէտք
էր հետամտաւ ըլլալ այն ճամբուն, ու-
րով Ռուսիա ալ պիտի հասնէր ուրիշ
քաղաքականացեալ ժողովրդաց աստի-
ճանին. որոնց զարգացումը զմայլմամբ
արբեցուցեր էր Թուրկենեմի միտքը. և
ահա այս պատճառաւ ինչ որ առաջ
ուսումն ու գիտողութիւն էր, ժամա-
նակաւ փափաք եղաւ:

Թուրկենեմ յամին 1834 դարձցէն
անցաւ Մոսկուայի համալսարանը՝ զբա-
րութեանց ուսումն բնելու, ուր քիչ
ժամանակ մնաց. վասն զի հօրը մահը
վրայ գալով, ստիպուեցաւ Պետրպուրկ
փոխարդուիչ: Պետրպուրկի համալսա-
րանին վիճակը գիտութեանց կողմանէ
շատ խեղճ էր, և քանի մը թիւթե քա-
րեկարգութիւններէն ետքն ալ գեռ շատ
ուրիշ կարգաւորութեանց պէտք ու-
նէր: Զկար այն անուններէն մէկը որ
գիտութեանց խաղաղական ասպարի-
զին վրայ ստուգած համբաւովը՝ դար մը,
ազգ մը կը լուսաւորէ և ձեռնառու կ'ըլ-
լայ ապագային թէ մարդկանց և թէ
գիտնականաց ձեռքմանը: Համալսա-
րանն և ոչ պատմական աւանդութիւն
ներ ունէր: Սովորեցնելու չոր ու ցամաք
ոճն՝ աշուկերտաց մտացն ամենին ա,
խորթելի չէր ընծայեր զուսումը, և ու-
սուցանողաց երկարատե հետազոտու-
թեանց և փութալման վարդապետու-
թեանց արդիւնքը չէր դասախօսու-
թիւնն, այլ ծառայական և խեղճ ընդ-
օրինակութիւն մը քանի մը ծաղկա-
քաղ գրոց 'ի պէտս Թագաւառաւցին
(ad usum Delphini): Աշակերտը իրենց
առած դասերէն քաղուածոյ կ'ընէին,
և ետքն հարցաքննութեան ժամանակ
բերնուց կ'ըսէին: Եւ դարձեալ աշա-
կերտաց մեծ մասն ոչ թէ դաստիարա-
կուելու և ուսմանց մէջ կատարելագոր-
ծուելու համար համալսարան կը յա-
ճախէին, այլ չին, այսինքն՝ պատուոյ
և ազնուականութեան նշանն ընդունե-
լու համար:

Այն ժամանակներն յորում պատա-
նին Թուրկենեմ համալսարան կ'եր-
թար, սաստիկ խռովեալ և վրասնզ
լից էին: Ռուսական ընկերութիւնն՝ որ
Աղէքսանդր Ա թագաւորելով կենաց
և ազաւանութեան շունչ մը առած էր,
քիչ ետքը խորին թմբկութեան մէջ
ընկաւ: Վերջին աստիճանի վրասնզաւոր
էր քաղաքական և ընկերական խնդրոյ
վրայ խօսիլ և գրել. ուստի գրականու-
թիւնն պէտք էր որ սահմանաւորուէր
յարուեստս միայն: Ռուսնոք համալ-

սարունական ընթացքնին լրացնելով՝
օտար երկիրներ կ'երթային, իրենց կըր-
թութիւնն և ուսմունքն կատարելագոր-
ծելու համար. և այս սովորութիւնն
մինչև հիմա ալ պահպանած է, և գրեթէ
անհրաժեշտ հարկ մը սեպուած է: —
Գերազոյն միտք մը չէր կրնար գոհ ըլ-
լալ տարրական ծանօթութեամբք, ա-
նոր համար բանասիրութեան ընթացքն
ամբողջացրնելով, թուրկենեմ ուրիշ
իրեն ուսումնական ընկերներուն հետ
մէկտեղ թողուց հայրենիքը յամին
1838, և զնաց Պետլին, փափաքանօք
ճոխացունելու իր ծանօթութեց գան-
ձը: Համալսարանն ըստ բաւականին
չէր յադեցուցած այն պատանին, և
կ'ուզէր այն աղբիւրներու դիմել, ուս-
տի օգտուեցան Շիլլէր, Կէթէ, և այլք:
«... Շատ ժամանակէ 'ի վեր, կը
գրէ Մատենադարանէն Յիշատակա-
լանաց մէջ, կը փափաքէ այս ճամբար-
դութիւնն ընելու... ամենայն կերպով
համոզուած էի որ ճշմարիտ գիտու-
թեան աղբիւրն օտար երկիրներ կը
գտնուի: Այն ժամանակուան Պետլը-
պուրկի համալսարանին վարժապետաց
մէջ ոչ ոք կար որ կարենար փոխել
այս իմ համոզումս, և նոյն իսկ իրենք
ալ իմ կարծիքէս էին: Պետլին կեցոյ
երկու տարի, և հօն պարապեցայ իմառ-
տասիրութեան, պատմութեան և հին
ընդունաց վրայ, և գլխաւորապէս Հէկե-
լի ուսումն կ'ընէի մեծ ախորժով, վէր-
տէր վարժապետին առաջնորդութեամբ:
Գաղափար մը տալու համար ուս-
մանց անբաւականութեան վրայ, զոր
'ի բարձրագոյն դպրոցս Բուսիոյ կ'ու-
սուցանեն, կ'ըսեմ որ մինչդեռ մոտիկ
կ'ընէի Զումպթի (Zumpt) դասախօսու-
թիւնները լատինաց հնութեանց վրայ,
և Պէքի (Böck) դասախօսութիւններն
Յունաց զրականութեան պատմութեա-
նը վրայ, ստիպուած էի բերնուց սով-
րելու լատին և յոյն քերականութիւն-
ները...»

« Իմ ընկերակցացս յօժարութիւնքը
կը յիշեցնէին ինծի մեր նախնիքն, ու-
րոնք ծովուն անդին եղող վարիակի-

ներէն իրենց իշխան կը խնդրէին: Մեզ-
մէ ամեն մէկը մի և նոյն կերպով կը
զգար որ իր երկիրը (չեմ հասկընար
հայրենիք, այլ բարոյական և մտաւո-
րական բարիք) մեծ և ճոխ էր, բայց
վրան անիշխանութիւն կը տիրէր: Իսկ
ինծի նկատմամբ կ'ըսեմ, որ ես չէի մոռ-
նար այն վտանգալից հետեանքն, որ
առաջ կու գան հայրենիքը թողլով և
այն կապերը խզելով՝ որոնք զիս կը զօ-
ղէին այն ընկերութեան հետ՝ որուն
մէջ սնայ և դաստիարակուեցայ, բայց
ճար չկար: Այն ընկերութիւնը, և կամ
թէ որ կարելի է այսպէս ըսել, այն եր-
կրատեանց և գերեաց խումբը, որուն
ես ալ կը վերաբերէի, չունէր այնպիսի
բան մը որ կարենար զիս ետ կեցնել
այս իմ խորհրդէս. և ոչ թէ միայն չէր
կրնար զիս արգելուլ, այլ և ինչ որ
կը տեսնէի՝ վհատութեան և ատելու-
թեան զգացմունք կ'ազդէր յիս: Երկար
չէի կրնար դեղնել. պէտք էր կամ
հպատակիլ և հասարակաց ճամբուն
հետեիլ, և կամ երես դարձունել և մեր
ժել միանգամայն զամենեւին և զամե-
նայն (omnes et omnia), վտանգաւ
կորսընցունելու շատ սիրելի առարկա-
ներ և սրտիս մերձաւորներ: Այսպէս
ըրի... ձգեցի ինքը զիւրս գերմա-
նական ճովուն մէջ, որ զիս պիտի
սրբեր և պիտի կենդանացնէր. և վեր-
ջապէս երբոր անոր ալեաց մէջէն դուրս
ելայ՝ արդէն արեւմտեցի էի և միշտ
ալ մնացի:

« Եւ ոչ իսկ մտքէս անցաւ պախարա-
կել ժամանակակիցներէս զանոնք, որ
նուազ բացասական կերպով այն ազա-
տութեան հասան, որուն հետամուտ էի:
Բայց աս ըսելով կ'ուզեմ հասկընել թէ
ինծի համար ուրիշ հնարք չկար: Ես չէի
կրնար մի և նոյն օդը շնչել, և ոչ մօտ
կենալ այն բանին, որ ինծի ատելի էր,
առ այս թերեւս բնաւորութեան հաս-
տատութիւն կը պակսէր ինծի: Հարկ
էր որ հեռանայի թշնամիէս, որպէս զի
աւելի բուռն զօրութեամբ կուռէի ա-
նոր դէմ: Իմ աչացս առջև թշնամին
կը ներկայանար որոշ կերպարանքով. և

ծանօթ անուամբ այս թշնամին — Գե. րուժիւնն — էր Ռոյս անուան տակ միացուցի և ամբողջացի այն ամենայն ինչ որ որոշած էի մահուլափ հալածելու և որուն դէմ յաւիտենական թշնամութիւն երգուայ։ Այսպիսի էր երգումն Աննիբալայ նման. ես միայն չեղայ երգող, եւ խոտմունքս լաւ պահելու համար քաշուեցայ։ Բայց ես չեմ կարծեր որ արևմտականոքիւնը վերացուցած ըլլայ ինծմէ ամեն սիրայիր զգացմունք բուսական կենաց, անոր պայծառութեանն և պիտոյից համար։

« Որսորդի մը Յիշատակարանքն, որ ժամանակ մը նոր երեցան, և այսօր հնացած են, օտար երկրի մէջ գրեցի, որոնցմէ մէկ քանին գրելու ժամանակ ծանր մտածութեանց մէջ ընկզմած էի, և խիղճս կ'ըսէր ինձի որ հայրենիք դռնամբ։ Պիտի պատասխանեն ինձի թէ այն ազգային սիրոյ փորրիկ մասն, որ Յիշատակարանաց մէջ կը գտնուի, ոչ թէ 'ի շնորհս իմ արևմտական կարծեացս դեռ ևս կենդանի մնաց, այլ հակառակ այս իմ կարծեացս և հակառակ կամացս։

« Դժուարին կ'ըլլայ ոյդպիսի խընդրոյ վրայ վիճել. — այս միայն ստուգիւ գիտեմ, որ եթէ Ռուսիա մնացած ըլլայի, Որսորդի մը Յիշատակարանք գրած չէի ըլլար։ Այս ալ կ'աւելցնեմ, որ ես չէի կրնար երբէք ընդունել այն անմատչելի պատուարը զոր քանի մը անհանդարտ և նաև յանգուգն բայց անփորձ հայրենասէրք բացարձակապէս կ'ուզեն կանգնել ընդ մէջ Ռուսիոյ և արևմտեան Եւրոպայի, այսինքն այն Եւրոպայի որուն հետ Ռուսիա կապուած է ծագմամբը, լեզուաւր, և հասարակաց կրօնից զօդիւք։ Եւ միթէ բանասէրք և ժողովրդագիրք մեր սյու ազգն ալ հնդկա — գերմանական ցեղին զլսաւոր ճիւղերէն մէկը չեն համարիր։

« Եթէ անկարելի է ժխտել այն ազգեցութիւնն որ Յունաստան ըրաւ Հռովմայ վրայ, և երկուքը միանգամայն Հռովմա — գերմանական աշխարհին վը-

րայ, ինչ պատճառաւ պիտի մերժենք այս համասեռ և նոյն ծագումն ունեցող աշխարհին ազգեցութիւնը։ Ինչ, թերեւս այնպէս տկար ենք և այնպէս նուազ անկախ որ կարենանք վախճալ որ և իյէ օտար ազգեցութենէ և փախչիլ տղայական վախով որ չըլլայ թէ զեղծանեն զմեզ։ Ոչ. — ընդհակառակն ես կը կարծեմ որ թէ առդին դառնանք թէ անդին՝ մեր գրոշմը և մեր կնիքը միշտ զլսաւորապէս ուռա պիտի մնայ, եւ եթէ այսպէս չըլլար, ինչ տեսակ ազգ պիտի ըլլայինք։ Ես իմ յատուկ փորձովս կը խօսիմ։ Իմ յարգանքս առ արևմտեան սկըզբունս ամենեւին չմարեց իմ նախանձաւոր սէրս, զոր մեր լեզուին համար կը սնուցանէի, Բանագատք՝ որ այնչափ անգամ վրաս մեղադրանք կուտեցին Ռուսիոյ մէջ, երբէք զիս չառ խարակեցին, որչափ որ ես դիտեմ, խառն լեզու մը գործածելու և այնպիսի գրութեանն ոճի հետեւելու համար՝ որ օտար է մեր լեզուին ։

Բառ առ բառ մէջ բերինք Թուրկեանիի այս խօսքերը, որոնք շատ լաւ կը բացատրեն այն դժուարին գործը որ վրան ուռաւ, և կու տան բանալիքն ուղիղ կերպով դատելու իւր գրուածները, և վերջապէս յերևան կը հանեն թէ ինչ տարբերութիւն կայ ընդ մէջ արևմտական (occidentaliste) դպրոցի գաղափարին և ընդ մէջ ազգային կամ աշխարհի (nationaliste ou slavophile) դպրոցի գաղափարին։ Բայց լսենք ինչ որ կ'ըսէ Հայր և Որդիք վիպասանութեւ մէջ. « Բան մը չի կրնար ազատ ընել զմարդ, ինչպէս գիտութիւնն, և ուրիշ բանի մէջ այնչափ հարկաւոր չէ ազատութիւնն ինչպէս արուեստի, բաւնաստեղծութեան մէջ... ։ Չայս այսպէս կը մտածէր ինքն իսկ Բուշին երբ կ'երգէր — Ազատ ճամբէ մը դնա, ուր որ ազատ միտքը կը տանի գեղ — Եւ առաջ վարելով խօսքը դարձեալ կ'ըսէ. — Ոչ, առանց դաստիարակութեան, առանց յազատութեան, ընդարձակ նշանակութեամբ առնելով, մարդ նկատմամբ ինքն իրեն, նկատմամբ իւր նա-

խամեծար սիրելի գաղափարացն ու
յատուկ տեսութեանցն, նաև ինչուան
նկատմամբ իր ժողովրդեան ու սեփա-
կան պատմութեան անկտրելի է որ ա-
րուեստաւոր մ'ըլլայ. առանց այս օգոյս՝
կեանքն անկտրելի է ։

Եւ թէ ինչպէս ինքը կը զգար ազա-
տութեան այս պէտքը նաև ուրիշե-
քու համար, և իրական կենաց մէջ ալ,
կը տեսնուի, երբ մայրը վախճանեցաւ
յամին 1850, ազատեց բոլոր իր գերի-
ները, շատ տարի առաջ քան զնշանա-
ւոր օրինադրութիւնն փետրուարի 19ին,
որով Աղեքսանդր Բ կայսրն ազատու-
թիւն կը շնորհէր գերեաց :

« Թուրկներն, կ'ըսէր Բէլինկի ա-

նունով ռուսաց ծանօթ հեղինակ մը,
սրտալիւր մարդ մ'է և եղական միտք
ունեցող մէկն է : Ինքը կատարեալ կեր-
պով կը ճանչնայ Ռուսաց ազգը, և թըշ-
նամի է անորոշութեան ։ Սակայն
թուրկներովի այս յետին կնիքը՝ իւր
ամեն գրուածոց մէջ կը գտնուի, ուր
կը հազորդէ ընթերցողին իւր տպաւո-
րութիւնները, զգենլով քանի մը նախա-
մեծար սիրելի անձանց կերպարանք :
Եւ ասոր համար է որ Թուրկներովի
վիպաց և վիպասանութեանց ընթեր-
ցումը կը սովորեցունէ ոչ միայն լաւ
ճանչնալ զգրագէտն և զբանաստեղծը,
այլ և ազատական և ազնուական զգա-
ցումն ունեցող անձն :

